ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԿԱՐԴԱԼՈՒ ՏԱՐՐԱԿՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1-ԻՆ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԱՌԱՐԿԱՆ՝ ՄԱՅՐԵՆԻ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՈՒՍ. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ԳՈՇԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

ՄԵՆԹՈՐ՝ ՋՈՒԼԻԵՏԱ ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ

2023թ

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ 1.Կարդալու տարրական կարողության ձևավորումը..... 5
1.1 Ընթերցողական կարողությունների ձևավորումը 5
1.2 Ընթերցանության կարողությունների որակական հատկանիշներն ու ստուգման տեխնիկան 8
ԳԼՈՒԽ 2. Կարդալու կարողությունների ձևավորման դժվարություններն ու հաղթահարման հնարները..... 11
2.1 Կարդալու կարողության ձևավորման դժվարությունները 11
2.2 Կարդալու դժվարությունների հաղթահահարման միջոցներ..... 15
Կարդալու դժվարությունների հաղթահարման մի քանի միջոց 18
Եզրակացություն 20
Գրականության ցանկ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու գրագիտության համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը կարդալու կարողությունն է: Վերջինս ձևավորվում է ուսումնառության ժամանակ և զարգանում ողջ կյանքի ընթացքում:

Ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ ներկա ժամանակներում, ինչպես աշակերտների, այնպես էլ մեծահասակների շրջանում, նվազել է հետաքրքրությունը ընթերցանության նկատմամբ: Աշակերտների մոտ այս խնդրի պատճառներից մեկը կարդալու կարողության դժվարություններն են: Քանի որ կարդալու կարողությունները ձևավորվում են առաջին դասարանում, ուստի, դժվարությունների և հաղթահարման մեթոդների հետազոտումը իրականացրել ենք առաջին դասարանում:

ՈՒսումնասիրության նպատակն է.

- բացահայտել առաջին դասարանում կարդալու կարողությունների ձևավորման քայլաշարը.
- մշակել կարդալու դժվարությունների հաղթահարման մեթոդիկան.

ՈՒսումնասիրության խնդիրներն են.

- ուսումնասիրել առաջին դասարանում՝ նախայբբենական շրջանում, կարդալու կարողությունների ձևավորման նպատակով իրականացվող աշխատանքների մեթոդաբանությունը.
- ուսումնասիրել տառուսուցման շրջանում կարդալու կարողությունների ձևավորման մեթոդները.
- բացահայտել կարդալու որակական հատկանիշներին ներկայացվող պահանջները.
- բացահայտել կարդալու դժվարությունների առաջացման պատճառները.
- մշակել դրանց հաղթահարման միջոցները:

Հետազոտության իրականացման մեթոդներն են.

- մեր աշխատանքի վերաբերյալ մասնագիտական գրականության, մայրենիի դասագրքերի, մեթոդական ձեռնարկների և թեմայի վերաբերյալ հրապարակված հոդվածների ու ամսագրերի ուսումնասիրություն.
- դասալսումներ և մեթոդական խորհրդակցություններ առաջին դասարանի դասվարների հետ.
- հարցազրույց դասվարների հետ.
- ուսումնասիրության արդյունքների վերլուծություն.

ՈՒսումնասիրության տեսական նշանակությունը

- Մշակել և տեսականորեն հիմնավորել կարդալու դժվարությունների առաջացման պատճառները, ներկայացրել հաղթահարման միջոցները։

ՈՒսումնասիրության գործնական նշանակությունը.

- Մեր առաջարկած կարդալու կարողությունների քայլաշարն ու դժվարությունների հաղթահարման հնարները կիրառելի են մայրենիի դասագործընթացում։

ԳԼՈՒԽ 1.Կարդալու տարրական կարողության ձևավորումը

1.1 Ընկալողական կարողությունների ձևավորումը

Կարդալու կարողությունների ձևավորումը մայրենիի ուսուցման կարևորագույն խնդիրներից մեկն է: Դեռևս առաջին դասարանում, գրաճանաչության նախայբբենական շրջանի ուսումնական խնդիրները, սովորողների մոտ գրելու և կարդալու կարողությունների ձևավորմանն են ուղղված: Նախայբբենական շրջանի կարևորագույն խնդիրներն են՝

1. Խոսքի զարգացում՝ բառապաշարի մաքրում, հղկում, հարստացում:
2. Հնչյունային լսողության զարգացում՝ հնչյունների մաքուր արտաբերում, բառի մեջ հնչյունի տողորոշում:
3. Գրելու նախապատրաստում՝ մատների մանր մոտորիկայի զարգացում:
4. Մտածողության զարգացում՝ լեզվամտածողության զարգացում, հաղորդակցման հմտությունների ձևավորում:



Նկար[1] 1

[1] *Վաչագան Սարգսյանի հեղինակած այբբենարան:*

Կարդալու գործընթացի ողջ հետագա ընթացքը մեծապես պայմանավորված է նախայբբենական շրջանի մեթոդական ճիշտ աշխատանքով: Այս փուլում, մինչև հնչյուն-տառի ուսուցումը, աշակերտները նախնական պատկերացում են ունենում պատմության, նախադասության, բառի, վանկի ու հնչյունի մասին:

Պաստառը /նկար 1/ կօգնի նախաայբբենական շրջանում ուսուցանելու պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն շղթան և հակառակը: Բոլոր նկարների շուրջ երեխաները կարող են հորինել պատմություններ, ապա պատմությունից առանձնացնել այնպիսի նախադասություններ, բառեր, որոնք համապատասխանում են տրված գծապատկերներին, այնուհետև բառը ենթարկել հնչյունային վերլուծության և առանձնացնել ձայնավոր և բաղաձայն հնչյունները: Սա նպաստում է ոչ միայն պատմություն–հնչյուն շղթայի բաղադրիչներն առանձնացնելու կարողությանը, այլև վերլուծահամադրական մտածողության զարգացմանը:

Դրվագների շուրջ աշխատանքը հնարավորություն է տալիս զարգացնելու երեխաների ստեղծագործական երևակայությունը, դիտունակությունը և բառապաշարը:[2]

Գրաճանաչության ընթացքում գրելու և կարդալու գործընթացը զուգահեռ է ընթանում և հնարավոր չէ տարանջատել: Տառաճանաչության գործընթացի ամենակարևոր խնդիրը՝ ուսումնասիրվող հնչյունի, տառի ընկալումն է: Այս փուլում նախ ծանոթանում են հնչյունին, ապա նոր նրա նշանին՝ տառին: Բացառությամբ Ե և Ո տառերի, որոնց դեպքում աշխատում են տառից հնչյուն շղթայով: Հնչյուն-տառի ուսուցման դասը պետք է սկսել պատմությունից նախադասություն, բառ, վանկ, հնչյուն մեթոդական շղթայով: Եվ միայն հնչյունի լավ ընկալումից հետո, երբ անսխալ արտաբերում են հնչյունը, որոշում նրա տեսակն ու տեղը բառի գծապատկերի մեջ, կարելի է տալ տառի գաղափարը: Այստեղ պետք է խոսել այն մասին, որ տառը հնչյունի պատկերն է. երբ խոսում ենք ու լսում՝ գործ ունենք հնչյունի հետ, իսկ երբ գրում ենք, տեսնում և կարդում՝ տառի:[3]

Այս գաղափարի ամրապնդման նպատակով տեղին է ուսուցանել Վ. Սարգսյանի «Հնչյուն-տառի երգը».

---

[2] Սարգսյան Վ. Ա. Այբբենարան: ՈՒսուցչի ձեռնար «ՄԱՆՄԱՐ», 2011, 236 էջ:

[3] Ջ. Գյուլամիրյան «Մայրենիի ուսուցման մեթոդիկա» Երևան 2018

Ես հնչյունն եմ, հնչյունն եմ,

Օդում ապրում, շնչում եմ,

Երբ գրեցիր տառ եմ ես,

Գիր եմ արդեն բարետես։[4]

Հնչյունի ու տառի հստակ պատկերացումից հետո, ուսուցիչը կարող է ցույց տալ հնչյունի տպագիր տառերը՝ մեծատառ և փոքրատառ։ Այնուհետև բացահայտում են տառի մասնիկների քանակը, համեմատում նախորդ դասերում սովորած տառերի հետ, գտնում նմանություններ ու տարբերություններ։ Սա օգնում է ավելի դյուրին տարբերակել գրությամբ իրար մոտ, նմանվող տառերը։ Օրինակ՝ ա-ս, ռ-ու, ի-խ և այլն։

Հաջորդ փուլը տառակապակցությունների կազմումն է։ Այստեղ նոր սովորած տառը կապում ենք արդեն սովորած տառերին և ընթերցում տառակապակցությունները։ Այսպիսով, առաջին բաղաձայն հնչյունը սովորելիս, պետք է ստանանք բաղաձայն+ձայնավոր և ձայնավոր+բաղաձայն տառակապակցություն։ Օրինակ՝ Ն հնչյուն-տառը սովորելիս պետք է ստանանք նա, նի, նու, նե, նո, ան,ին, ուն, են ոն



տառակապակցությունները։

Այս մեթոդական հնարի օգնությամբ ընթերցանության գործընթացը սահուն է ընթանում, քանի որ բաղաձայն հնչյունները առանձին արտաբերելիս վերջում լսվող ը-ն խանգարում է բառի ճիշտ կարդալուն, իսկ այս դեպքում ը-ն չի լսվում։

[4] Վ. Սարգսյան «Այբբենարանի ձեռնարկ»

Կարդալու և գրելու կարողությունները ձևավորվում են մի շարք միջոցներով։ Առաջին հերթին բառերի, բառաշարքերի, բնագրերի ընթերցումն է, լեզվատրամաբանական առաջադրանքների կատարումը, այդ առաջադրանքների պայմանների ընթերցումը։

Կարդալու, գրելու կարողությունների ձևավորմանը և զարգացմանը, բնականաբար, նպաստում են լեզվական այն գիտելիքները, որոնք նախատեսված են պետական ծրագրով և ուսուցանվում են «Այբբենարանում»։ Այսպես, հնչյունաբանությունից երեխաները սովորում են բառերը վերլուծել ըստ հնչյունների, զանազանել բաղաձայն և ձայնավոր հնչյունները, դրանք նշանակել բառային գծապատկերներում։ Ձևաբանությունից սովորում են, որ բառերը առարկաների անվանումներ են, մի բառը կարող է «կազմված լինել» մեկից ավելի առարկաներից՝ ((արև) ա (ծաղիկ)), որ բառերը ցույց են տալիս առարկաներ, նրանց հատկությունները, մարդկանց, կենդանիների, առարկաների գործողություններ, որ յուրաքանչյուր բառ ինչ-որ բան նշանակում է այսինքն՝ իմաստ ունի։ Նախնական պատկերացումներ են ունենում առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերի մասին (խոսքի մասեր)։ Հասկանում են, որ նախադասությունը կազմված է բառերից և իմաստ է արտահայտում, սովորում են նախադասության ուղղագրությունը (շարահյուսություն)։ Գործնականում սովորում են կետադրական նշանները, յուրացնում են մեծատառի գործածության կանոնները։ Այս ամենը նպաստում է խոսքի զարգացմանը և կարդալու կարողությունների ձևավորմանը։

1.2 Ընթերցանության կարողությունների որակական հատկանիշներն ու ստուգման տեխնիկան

Կարդալու որակական հատկանիշների մասին խոսելիս առանձնացնում ենք՝ սահուն կարդալ, ճիշտ կարդալ և հասկանալով կարդալ։ Կարդալու այս հատկանիշներին տիրապետող աշակերտներն ավելի հարուստ բառապաշար ունեն,

շրջապատող աշխարհի մասին առավել տեղեկացված են, ինչպես նաև գրելու, կարդալու ժամանակ քիչ սխալներ են թույլ տալիս: Սակայն ոչ բոլոր աշակերտներն ունեն նշված հատկանիշները:Կարդալու կարողությունների խանգարումները շտկելու մասին մտածելուց առաջ , նախ պետք է պարզել <<վատ>> կարդալու պատճառները: Երեխաները դպրոց են գալիս պատրաստվածության տարբեր մակարդակով և ուսումնառության ընթացքում տարբեր արագությամբ են հաջողություններ գրանցում: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ մարզերում՝ հատկապես գյուղական բնակավայրերում, երեխաները դպրոց են գալիս բարբառային հարուստ բառապաշարով, որն իր հերթին խնդիր է առաջացնում գրական տեքստի հետ աշխատելիս: Այս հարցի լուծումը ուսուցչից մանկավարժական տակտ և վարպետություն է պահանջում, որպեսզի աշակերտի մոտ ձևավորի գրական խոսք և բառապաշար՝ միաժամանակ չվիրավորի, չարժեզրկի բարբառային խոսքը: Այն երեխաները, որոնց համար ծնողները հաճախ են հեքիաթներ, գրքեր կարդացել, ավելի արագ են ընկալում գրական խոսքը:[5]

Դպրոցներում ընդունված է ժամանակ առ ժամանակ ստուգել աշակերտների ընթերցանության տեխնիկան: Երեխային տրվում է տեքստ, որը պետք է մեկ րոպե ընթերցվի, իսկ հետո, երբ ժամանակը սպառվում է, հաշվում են կարդացած բառերի քանակը: Ընթերցանության հմտությունները անընդհատ զարգանում են, ուստի կարևոր է տարին առնվազն երկու անգամ ստուգել ընթերցանության տեխնիկան: Ընթերցանության տեխնիկայի ստուգման համար օգտագործվում են ռուբրիկներ, որոնց միջոցով պարզ է դառնում ընթերցանության սահունությունը, ճշգրտությունը, արագությունը և ընկալումը: Ստորև ներկայացնում եմ առաջին դասարանում ընթերցանության ստուգման չափորոշիչները.

Ընթերցանության տեխնիկայի ստուգում 1 դասարան, 1-ին կիսամյակ

Այս ստուգումներն իրականացվում են աշակերտի ընթերցանության հիմնական մակարդակը որոշելու համար: Այս փուլում բավական է, որ աշակերտը մեկ րոպեում

[5] ՆԱԽԱՇԱՎԻՂ 1.2015

կարդում է 10-15 բառ , նույնիսկ վանկերի միջոցով: Այս ստուգումների համար ընդունվում են թեթև գեղարվեստական տեքստեր, սովորաբար երեխաներին ծանոթ հեքիաթներից: Ուսուցիչը չի գնահատում, նա պարտավոր է պարզապես տեղեկացնել ծնողներին իրենց երեխայի ընթերցանության մակարդակի մասին:

Ընթերցանության տեխնիկայի ստուգում 1 դասարան, 2 կիսամյակ

Երկրորդ կիսամյակում արդեն վերահսկվում է, թե ինչպես է երեխան առաջադիմում և նոր հմտություններ է տիրապետում: Գրեթե բոլոր երեխաների հարմարեցման ժամանակաշրջանն ավարտված է, այժմ նրանք կարող են ցույց տալ իրենց ներուժը: Այս տարիքի ընթերցման չափանիշը մեկ րոպեում 15-ից 40 բառ է, ցանկալի է ամբողջությամբ կարդալ բոլոր բառերը

Տեխնիկայի ստուգումը 1-ին դասարանիի ավարտին

Սա հսկողության ստուգում է, որը ցույց է տալիս, որ անցած տարվա ընթացքում երեխաները սովորում են բոլոր հմտությունները: Որոշ ծրագրեր ենթադրում են ընթերցանության տեխնիկայի միայն մեկ ստուգում `վերջնական, տարվա վերջում: Նորմերը նույնպես տարբեր են, առաջին դասարանի ավարտին երեխան պետք է մեկ րոպեի ընթացքում կարդա 17-41 բառ:

ԳԼՈՒԽ 2. Կարդալու կարողությունների ձևավորման դժվարություններն ու հաղթահարման հնարները

2.1 Կարդալու կարողության ձևավորման դժվարությունները

Դպրոց ընդունվելիս երեխան, սովորաբար, թե ֆիզիկապես, թե հոգեբանորեն արդեն պատրաստ է ուսուցման համար, նախապատրաստված է իր կյանքի համար նոր կարևոր շրջանին, այն բազմապիսի պահանջների կատարմանը, որը նրան ներկայացնում է դպրոցը: Կրտսեր դպրոցական տարիքում `6-ից 10 տարեկան, որոշակի զարգացած են իմացական պրոցեսները՝ ընկալումը, ուշադրությունը, հիշողությունը, երևակայությունը և մտածողությունը[6]: Այս գործընթացների զարգացումը պարտադիր նախապայման է, որով էլ պայմանավորված է աշակերտների հետագա ողջ ուսումնառության գործընթացը:

Հոգեկան գործընթացներից որևէ մեկի խանգարումը հանգեցնում է ուսումնառության մի շարք դժվարությունների: Գրաճանաչության ողջ ընթացքում, գրելու և կարդալու գործընթացը զուգահեռ են ընթանում, ուստի խոսելով կարդալու կարողությունների ձևավորման դժվարությունների մասին, պետք է անդրադառնալ նաև գրելու դժվարություններին: Գրավորը երեխայի համար առանձնահատուկ, միևնույն ժամանակ ծանոթ համակարգ է: Այն հիմք է հանդիսանում ցանկացած մարդու մտավոր գործունեության համար: Գրելու գործընթացի խանգարումները պայմանավորված են բարձրագույն հոգեկան այնպիսի գործառույթների խանգարմամբ, որոնցով իրականանում է գրելու բնականոն ընթացքը: Գրելու խանգարումներ ունեցող երեխաների բարձրագույն հոգեկան մի շարք գործառույթներ թերի են ձևավորված: Երեխաների մոտ գրելու գործընթացի խանգարումները համարվում են գրելու գործընթացի հմտություններին տիրապետելու դժվարություններ, որոնք հաճախ ուղեկցվում են մտավոր հետամնացության, մանկական ուղեղային կաթվածի, աուտիզմի և մի շարք այլ խանգարումների դեպքում: Գրելու գործընթացի խանգարումներ կարող են արտահայտվել նաև ինքնուրույն:

[6] Կրուտեցկի « Մանկավարժական հոգեբանության հիմունքներ» Երևան 1976:

Դպրոցներում մայրենի լեզվի և հետագայում օտար լեզուների ուսուցման կարևորագույն խնդիրներից մեկը համարվում է երեխաների մոտ գրագետ գրի հմտության ձևավորումը: Դա, ինչպես հայտնի է, կազմում է գրավոր խոսքի նյութական հիմքը, առանց որի անհնար է հաջող ուսուցման գործընթացը: Գրելու գործընթացի խանգարումներ ունեցող երեխաներին գրելիս բնորոշ է տարատեսակ սխալներ՝ տառերի, վանկերի, բառերի բնութագրիչ փոփոխություններ, բացթողումներ, տառերի և վանկերի տեղափոխություններ և այլն, որոնք կրում են կայուն և կրկնվող բնույթ: Խոսքի խանգարումները տարբերվում են ձևով և արտահայտվածության աստիճանով: Դրանք կարող են վնասել միայն խոսքի հնչյունաբանական կամ իմաստային կողմը, բառապաշարը, քերականական կառուցվածքը: Բացի այդ, խանգարումները դրսևորվում են խոսքի արագության և սահունության փոփոխությամբ (օրինակ՝ կակազելու դեպքում), գրավոր խոսքի և ընթերցանության խախտումներով:Գրավոր խոսքն ունի խոսքային գործունեության երկու տեսակ՝ գիր և ընթերցանություն: Գրի խանգարումներն անվանում են դիսգրաֆիա, իսկ ընթերցանության խանգարումները՝ դիսլեքսիա: Այս խանգարումները կարող են դրսևորվել առանձին-առանձին, սակայն հիմնականում լինում են զուգակցված: Գրի լրիվ բացակայությունն անվանում են ագրաֆիա, իսկ ընթերցանությանը՝ ալեքսիա: Դիսգրաֆիայի և դիսլեքսիայի խանգարման պատճառները նույնն են:7

Ներկա ժամանակներում մասնագետների հիմնական նպատակն է համարվում դիսգրաֆիայի վաղ բացահայտումը և հաղթահարումը՝ երեխայի հետագա ուսումնական գործունեության զարգացման նպատակով: Ընթերցանության խանգարումները ուղեկցվում են նաև ոչ խոսքային խանգարումներով, որոնք չեն ընդգրկվում դիսլեքսիայի սիմպտոմատիկայի մեջ, իրենցից ներկայացնելով ախտաբանական մեխանիզմներ / օրինակ՝ տարածական պատկերացումների խանգարումները /: Կարդալու խանգարումների դեպքում նկատվում են սխալների հետևյալ խմբերը.

[7] Վիքիպեդիա, ազատ հանրագիտարան

✓ Ընթերցելիս հնչյունների / հատկապես արտաբերմամբ մոտ / փոխարինումներով և շփոթումներ, ինչպես նաև գրաֆիկորեն նման տառերի փոխարինումներ.(օրինակ, հաճախ են շփոթում *ա* և *ս, ռ* և *ու* տառերը և՛ գրելիս և՛ ընթերցելիս):

✓ Տառային ընթերցում, այսինքն՝ վանկեր և տառեր կազմելու համար հնչյունների միացման խախտում, տառերի անվանման հերթականությամբ / տ, ու, ն /:

✓ Բառի հնչյունավանկային կառուցվածքի աղավաղումներ, որոնք արտահայտվում են բաղաձայների կամ ձայնավորների բացթողումներով, ավելացումներով, հնչյունների տեղափոխություններով, բացթողումներով, վանկերի տեղափոխություններով և այլն:

✓ Կարդացածը հասկանալու խանգարումներ, արտահայտվում են առանձին բառի, նախադասության կամ տեքստի մակարդակով, երբ ընթերցանության ժամանակ չեն դիտվում տեխնիկական կողմի խանգարումներ, սակայն կարդացածի իմաստը չեն ընկալում:

Չկա դիսլեքսիա ունեցող իրար նման երկու մարդ, այդ իսկ պատճառով յուրաքանչյուր երեխա, ով ունի դիսլեքսիա, ամենայն հավանականությամբ կունենա այս նշանների "խառնուրդը"

Դեսլեքսիան բնութագրվում է հետևյալ կերպ.

1.Դիսլեքսիան կամ կարդալու կարողության խանգարում ունեցող սովորողները դժվարություններ են ունենում կարդալիս և կարդացածը հասկանալիս:

2.Դիսլեքսիան նյարդաբանական խանգարում է և կարող է պայմանավորված լինել հնչութային ընկալման, հնչյունահնչութային վերամշակման խնդիրներով:

3.Դիսլեքսիայի նշանները սովորաբար ավելի ակնհայտ են դառնում, երբ երեխաները դպրոց են հաճախում և սկսում են կենտրոնանալ ընթերցանության և գրելու վրա:

4.Դիսլեքսիա ունեցող երեխաների համար մեծ դժվարություն է դպրոց գնալը, ուսուցիչների ծնողների ու ընտանիքի անդամների անընդհատ ուղղումներին դիմանալն ու բառերը ճիշտ արտասանելու անվերջ փորձերը:



Նկար 2[8]

Ընթերցանության խանգարումները կարող են բացասաբար ազդել երեխայի անձի ձևավորման վրա: Այսպես՝ կարդալ սովորելու ընթացքում կրած անհաջողությունները կարող են նրա մոտ առաջացնել և ամրապնդել բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են՝ անվստահությունը սեփական անձի նկատմամբ, վախկոտությունը, հիվանդագին կասկածամտությունը, կամ ընդհակառակը, չարությունը, ագրեսիվությունը: Գրելու գործընթացի խանգարումները կարող է ուղեկցվել նաև ոչ խոսքային սիմպտոմներով. նյարդաբանական խանգարումներ, ճանաչողական գործունեության՝ ընկալման, հիշողության, ուղղագրության խանգարումներ, հոգեկան խանգարումներ: Ոչ սիմպտոմներն այս դեպքում չեն բնորոշվում դիսգրաֆիայի բնույթով և դրա հետ կապված չեն մտնում դիսգրաֆիայի սիմպտոմատիկայի մեջ: Նորմալ ինտելեկտով երեխան, որն ունի գրելու կամ կարդալու դժվարություններ, կարող է ունենալ նաև անձնավորության ձևավորման շեղումներ, որոշակի հոգեկան շերտավորումներ: Գրելու և կարդալու հմտությունների խանգարման արդյունքում երեխաները հետ են մնում ուսումնական ծրագրից, բացի այդ ունենում են բազմաթիվ դժվարություններ ուսումնական գործընթացում՝

[8] https://bit.ly/3typUT8

կատարում են սխալներ գրավոր աշխատանքներում, չեն կարողանում գրել թելադրություններ և այլն: Ինչպես նաև այս խնդիրների առաջացման հիմքում ընկած է մի շարք հոգեկան գործընթացների թերզարգացումը, իսկ զարգացման խնդիրներ ունեցող երեխաների մեծամասնությունը ունի մտավոր զարգացման խնդիրներ, որի դեպքում նկատվում է բարձրագույն հոգեկան գործընթացների թերզարգացում: Մենք կարող ենք ասել, որ հոգեկան գործընթացների թերզարգացմամբ պայմանավորված զարգացման խնդիրներ ունեցող երեխաների մեծամասնությունը կարող է ունենալ գրավոր խոսքի խանգարումներ:

2.2 Կարդալու դժվարությունների հաղթահարման միջոցներ

Կարդալու դժվարություններ ունեցող աշակերտներին անհրաժեշտ է օգնել՝ հաղթահարելու այդ դժվարությունները: Դա անելու համար , նախ պետք է բացահայտել աշակերտի ուժեղ և թույլ կողմերը: Հարկավոր է նախ պարզել ընթերցողական ունակության այն ոլորտները, որոնք ամրակայման կարիք ունեն:Եթե կարդալու որակական հատկանիշների մեջ են դժվարանում, ապա կարելի է աշխատել հետևյալ կերպ:

Եթե սովորողը դժվարանում է ճիշտ կարդալու հարցում , ուրեմն նրա հետ հաճախ պետք է աշխատանք տանել, որպեսզի ճշտորեն, մաքուր արտասանի բառի բոլոր հնչյունները: Այս աշակերտների հետ հաճախակի պետք է կազմակերպել տարատեսակ տառախաղեր,վանկախաղեր ու բառախաղեր:

Եթե աշակերտը դժվարանում է սահուն կարդալ, անհրաժեշտ է սովորեցնել տեքստն ընթերցել ամբողջական բառերով, խոսելու տեմպին համահունչ: Պետք է վարժեցնել մեկ հայացքով ընկալել մի քանի բառ ու բարակապակցություն;Առաջարկել տարիքին համապատասխան ընթերցանության հետաքրքիր նյութեր, որովհետև սահուն կարդալ սովորում են տարբեր տեքստեր կարդալով, ոչ թե նույնը անգիր սովորելով:

Եթե սովորողը դժվարանում է հասկանալով կարդալու հարցում, ապա նրա հետ տանում ենք այնպիսի աշխատանքներ, որ հասկանա ընթերցածի իմաստը, տեքստի վերաբերյալ հարցեր ու աշխատանքներ ենք տալիս: Աշխատում ենք ծնողների հետ, որ երեխայի համար հաճախ գրական տեքստոր, պատմվածքներ ու հեքիաթներ կարդան;

Իսկ արտահայտիչ կարդալու համար, անհրաժեշտ է , որ ընթերցանության նախորդ երեք պահանջները բավարար լինեն; Այս խնդրից խուսափելու համար տառուսուցմանը զուգահեռ ծանոթացնում ենք նաև կետադրական նշաններին, նրանց կարևոր գործառույթին, հետևում ենք ձայնի տոնայնությանն ու փոփոխությանը:

Կարդալու որակական հատկանիշների զարգացմանը հասնելու համար, բոլոր դասաժամերին, առավել ևս մաթեմատիկայի, աշակերտներին պետք է հանձնարարել կարդալ առաջադրանքների , խնդիրների պահանջը, և հասկանալ իրենց կարդացածը: Այսպես մենք սովորեցնում ենք փոքր նյութի վրա աշխատելով ընկալել կարդացածի իմաստը, որը հետագայում կիրառում ենք ավելի ծավալուն տեքստի վրա:

Այն դեպքում, երբ ընթերցանության դժվարությունները պայմանավորված են աշակերտի հնչյունային լսողության թերզարգացվածությամբ, կամ հոգեկան գործընթացների անբավարար զարգացվածությամբ, որոնց հետևանքոն աշակերտի մոտ առկա է դիսգրաֆիայի կամ դիսլեքսիայի նշաններ, ապա առաջարկվում է աշխատանքներ իրականացնել հետևյալ սկզբունքով:

Տարրական դասարանների դասվար Հասմիկ Հովսեփյանն ուսումնասիրել, համախմբել և հակիրճ ու ըմբռնելի կերպով ներկայացնում է, թե ինչ է դիսլեքսիան և ինչ մոտեցում պետք է ցուցաբերել կարդալու կարողության խանգարում ունեցող աշակերտների հետ աշխատելիս

- Երախային տրամադրել հավելյալ ժամանակ առաջադրանքները կատարելու համար:
- Անհրաժեշտության դեպքում տրամադրել դասագրքերի աուդիոտարբերակները և լրացուցիչ ժամանակ հատկացնել սովորողի արտասանությանն ու ընթերցանությանը:

- Մենք հաջողությամբ գործելու պայմաններ ստեղծենք նրանց համար և ոգևորենք նույնիսկ փոքրիկ նվաճումները:
- Հնարավորություն տանք բանավոր պատասխանել հարցերին,քանի որ նրանք կարող են ցույց տալ իրենց ըմբռնումը բանավոր պատասխանով:
- Մի՛ խնդրեք դիսլեքսիա ունեցող սովորողին բարձրաձայն կարդալ, այն կարող է ամոթի զգացում առաջացնել:
- Տպեք տեքստը թերթիկի վրա և առաջարկեք նրանց ընդգծել տեքստի կարևոր կետերը կամ նշեք այն նախադասությունները, որոնք կօգնեն կենտրոնանալ հիմանակ մտքի վրա:
- Քննարկեք առաջադրանքը երեխայի հետ՝ համոզվելու համար, որ նա հասկացել է, թե ինչ պետք է անի:
- Տեսողական միջոցների կիրառումը կամ առաջադրանքը հետաքրքիր, զվարճալի գործողության հետ կապելը կարող է օգնել դիսլեքսիա ունեցող երեխային հիշել նյութը:
- Մի՛ օգտագործեք <<ծույլ>> բառը:
- Դիսլեքսիա ունեցող սովորողը ստիպված է շատ աշխատել՝ նույնիսկ ամենափոքր արդյունք ունենալու համար: Նրանք դժվար են կենտրոնացած մնում նյութի վրա, երբ կարդում են:
- Գովեստը ուժ է տալիս, քննադատությանը՝ սպանում:
- Այս երեխաները կարիք ունեն ինքնավստահության բարձրացման,միայն այդ դեպքում նրանք կկարողանան սովորել հաղթահարել իրենց դժվարությունները:
- Սիրենք, ընդունենք, և փորձենք շտկել երեխաների խնդիրները:[9]

[9] Համացանց https://194school.org/2021/11/dislexia/ - tab-54f5380ca1dc29fbdf8

Կարդալու դժվարությունների հաղթահարման մի քանի միջոց

Կարդալու դժվարություններ ունեցող երեխաներն ու անձինք մշտապես խնդիրներ են ունենում ուսման և շրջապատի հետ շփման մեջ:

Կարդալու դժվարությունները պայմանավորված են նրանով, որ անձը կարդում է ու չի ընկալում իր կարդացածի իմաստը, դժվարանում է տառը համադրելով տառին, վանկը՝ վանկին ստանալ բառ, չի կենտրոնացնում ուշադրությունը և կարդալու գործողությունն ավարտին չի հասցնում:

Ըստ Ռոն Դեյվիսի ծրագիրի, որի հիմքում ուշադրության կենտրոնացման գաղափարն է, կարդալու գործընթացի խանգարումը պայմանավորված է ուշադրությունը կենտրոնացնելու դժվարություններով:

Ուշադրության շեղումը վերացնելու համար կարելի է ուշադրությունը կենտրոնացնող կետեր նշանակել այն նյութի վրա, որը պատրաստվում եք կարդալ: Ուշադրության շեղվում է կարդալիս անծանոթ սիմվոլի՝ բառի հանդիպելիս, որը խանգարում է ինքնատիրապետմանն ու ինքնավերահսկողությանը, որոնք չափազանց կարևոր են արագ տպավորությունների ու ժամանակի զգացողության զարգացման համար:

Կարդալու որակը բարձրացնելու համար կարևոր է վերահսկել ուշադրությունը շեղող գործոնները:

Սիմվոլները ճանաչելու երեք հիմնական գործոն կա.

1. Սիմվոլի բառի ճանաչումը
2. Դրա հնչողությունը
3. Գաղափար սիմվոլի՝ բառի կամ հասկացության նշանակության մասին:

Կարդալու դժվարություններ ունեցող անձինք մտածում են բացառապես պատկերավոր, նրանք չեն կարևորում բառի նշանակությունը, նրանց համար անծանոթ սիմվոլը՝ բառը ունի որոշակի պատկեր, որոշակի հնչյուն:

Կարդալու գործընթացը կհեշտացնեն այս երեք խորհուրդները.

Կարդալու դժվարություն ունեցող երեխան պետք է հայացքը տանի ձախից աջ՝ վազող տողի սկզբունքով:

Երեխաներին պետք է սովորեցնել հիշել տառերի խումբը որպես բառ։

Կարդացածի նյութի ընկալում՝ երեխաներին պետք է մղել պատկերավոր մտածողությունը զուգակցել կարդալու գործընթացի հետ։[10]

[10] IQ Center Qajaran

Եզրակացություն

Ընթերցանությունը մտքի համար նույնն է,
ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի։
Աղիսոն

Ընթերցանությունը ունի իր դրսևորման առանձնահատկությունները, սակայն տարիքային տարբեր փուլերում տարբեր կերպ է արտահայտվում։

Մենք մեր աշխատանքում անդրադարձել ենք տարրական դասարաններում կարդալու կարողությունների ձևավորմանը, այդ ընթացքում առաջացած դժվարությունների տեսակներին և հաղթահարման ուղիներին։

Կարդալու կարողության ձևավորումը պետք է դիտարկել ընդհանուր համատեքստում՝ նախայբբենական շրջան, գրուսուցում և ընթերցանություն։ Չի կարելի աշխատել միայն ընթերցանության զարգացման վրա, առանց մյուս երկու ասպեկտների զուգընթաց զարգացման։

Սակայն չի կարելի անտեսել նաև հետևյալ գործոնները.

1. Աշակերտի ֆիզիկական, մտավոր, հուզակամային առանձնահատկությունները, Խոսքի ապարատի խնդիրները, որոնք առաջացնում են հնչյունարտաբերման դժվարություններ, հետևաբաև և լսելու, ընկալելու, և արդյունքում, կարդալու դժվարություններ։

   Հոգեկան գործընթացների ոչ բավարար զարգացվածություն, որը ևս խոչընդոտում է կարդալու որակական հատկանիշների ձևավորմանը։

   Նման դեպքերում իրականացվող գործողություններն են.

   ա. Բացահայտում։

   բ. Ակնկալիքների ճիշտ սահմանում։

   գ. Անհատական մոտեցում։

   դ. Աջակցություն ուսուցչին հատուկ մասնագետների կողմից։

2. Ընտանեկան, սոցիալական վիճակը։

   Աշակերտի ցուցաբերած արդյունքի մեծ բաղադրիչներից է ընտանիքի անդամների և ծնողների ներդրումը։ Սովորաբար սոցիալապես անապահով, անհաշտ ընտանիքներում անտեսվում, կամ հետին պլան է մղվում երեխային ժամանակ հատկացնելը։ Օրինակ՝ հեքիաթներ ընթերցելը, նկարչությունը, կամ մանր մոտորիկան զարգացնող այլ աշխատանքները։

3. Բնակության վայրը։

   Այն բնակավայրերում, որտեղ խոսքի մեջ դրսևորվում է խոր արտահայտված բարբառային բառապաշար, բացասաբար է անդրադառնում սահուն և ճիշտ կարդալու կարողության վրա։

Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր հանգամանքները, եզրակացնում ենք, որ կարդալու կարողության զարգացման մեջ լավ արդյունքներ գրանցելու համար կարևոր է բոլոր շահագրգիռ կողմերի՝ դասվար, ծնող, այլ առարկայական ուսուցիչներ, մանկավարժահոգեբանական աջակցությունների ծառայությունների մատուցման կենտրոնի աշխատակիցներ, համաչափ ներդրումը։

Աշակերտների հետ ցանկացած աշխատանքում չպետք է անտեսել դասընկերների վերաբերմունքը՝ համբերատար լսելու, տեղին միջամտելու և չծաղրելու։

Գրականության ցանկ

1. Ջ. Գյուլամիրյան «Մայրենիի ուսուցման մեթոդիկա» Երևան 2018
2. Կրուտեցկի « Մանկավարժական հոգեբանության հիմունքներ» Երևան 1976։
3. Սարգսյան Վ. Ա. Այբբենարան։ ՈՒսուցչի ձեռնար «ՄԱՆՄԱՐ», 2011, 236 էջ։
4. Վ. Սարգսյան «Այբբենարանի ձեռնարկ»
5. Վաչագան Սարգսյանի հեղինակած այբբենարան։
6. ՆԱԽԱՇԱՎԻՂ 1.2015
7. https://194school.org/2021/11/dislexia/ - tab-54f5380ca1dc29fbdf8
8. https://bit.ly/3typUT8
9. IQ Center Qajaran
10. Վիքիպեդիա